կայ տունը։ Յիշեալ գումարը կոչւում է հաղէմասի, որ արաբերէն նշանակում է այն ասել, համաձայնել։ Պէտք է յիշել, որ պատգամները տղի տունը մտնելիս ամեն անգամ հիւրասիրւում են, իսկ աղջկայ տանը մինչև հաղէմասին տալը ոչ մի բանով չեն հիւրասիրւում։ Աղջկայ հայրը կանչում է իւր ազգականներից մի քանիսին և պատգամների հետ նստում օդան։ Պատգամները խնդրում են աղջկայ հօրը որոշել, թէ ինչ պիտի առնէ տղի հօրից աղջիկը տալու համար։ Սա հրաժարւում է, ասելով՝ թէ աղջիկը իմս չէ, այս ինչինն է, թող նա ասի։ Սա էլ, նախապէս իմանալով աղջկայ հօր միտքը, սկսում է բարձրից բռնել։ Պատգամները սկսում են սակարկել և կանգ են առնում գլխաւորապէս վճարելիք փողի վրայ, որ տատանւում է 30—220 միջև։ Որչափ տղան սիրահարուած և աղքատ լինի, այնքան հաղէմասին բարձր կլինի. այդ է պատճառը, որ աղքատ երիտասարդը ստիպուած է լինում կամ պարտքի տակ ընկնել, կամ փախցնել աղջկան։ Երկար սակարկութիւններից յետոյ, որ երբեմն մի քանի օր է տևում, փոխադարձ զիջողութիւններով վերջապէս համաձայնութիւն են կայացնում, և պատգամները վճարում են խսկոյն դրամը աղջկայ հօրը [1])։

Ախալցխայի գաւառում էլ գոյութիւն ունի գնմամբ ամուսնութիւնը։ Այն գումարը, որ վճարւում է փեսայի կողմից, յայտնի է գլխագին կամ թրքերէն ըաշլըղ անուններով։ Գլխագինը հատուցանում են հարսնացուի ծնողներին, երբ վերջիններս գալիս են այցելութեան փեսացուի տունը և յայտարարում վերջնականապէս, թէ յօժար են իրենց աղջկայ ամուսնութեանը [2])։ Նոյն տեղը սովորութիւն կայ, որ նորափեսան հարսանիքից առաջ քաւորի ու մի քանի մակարների առաջնորդութեամբ անձամբ գնում է բարեկամներին ու ծանօթներին հարսանիքի հրաւիրելու։

[1]) Ե. Լալայեան—Զաւախք, Ա. եր. 124.

[2]) Свадебные обычаи ахалцыхскихъ армянъ—Этнографическ. Обозр. 1889 г. № 1.

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան